

Թեան պահողաց: Երկրորդ՝ որ անա Տա-
 թեւացւոյն օրով իսկ կը պահուին տա-
 կաւին «կարգաւորաց» կողմանէ՝ շարա-
 թապահոց հետ միասին, որով նոր կար-
 գադրութիւնը ծանրացուցած պիտի լինէր
 կղերին լուծը, ինչ որ անտեղի է: Եր-
 րորդ՝ որ Աստուածայայտնութեան պահոց
 վերոյիշեալ (429) քմահաճ անմիաբանու-
 թեան մէջ կանոնաւոր վերածման մը հետ-
 քը չենք տեսներ բնաւ: Դիւրաւ կը մեկ-
 նուի Տաթեւացւոյն վկայութեան ոյժը,
 երբ նկատենք՝ թէ իւր ոճն է՝ ամէն բանի
 մէջ որ մեզ յատուկ էր՝ գտնել բարեբիկ
 բացատրութիւն մը, յաջող կամ անյաջող՝
 փոյթ չէ: Բայց յամենայն ղէպս շարա-
 թապահոց գոյութիւնը մեր մէջ՝ ապահով
 է Զ դարէն ի վեր:

Ազոնց կերակրոյ կարգը նոյն էր չո-
 րեքշարաթու եւ ուրբաթու հետ, ուստի
 եւ մեղմ, ինչպէս տեսանք Ասողկայ վկա-
 յութեամբ (աստ, 407): Հետեւաբար ա-
 ւելորդ է կրկնել այս տեղ:

9. — Առաջաւորք: — Ա. Ծանօթ էր
 Ե-Զ դարէն իսկ (Սահ. 111), սակայն
 իւր ծագման մասին հնոց կարծիքներն
 հաւասար չեն: Զենոր կ'ուզէ՝ որ նորա-
 դարձ Հայք Լուսաւորչի վարդապետու-
 թիւնը լսելու համար՝ «հինգ օր» անոր